

Ամերիկացի բժիշկ մը կըսէ, որ արդի միւրաբուժութիւնը որչափ որ ամեն տեսակ միւլոցներով դեղ և դարման կ'ընէ տեսակ տեսակ ժանր հիւանդութեանց, սակայն այնչափ ազդու չէ՝ որչափ արեգակնային բժշկութիւնն, որ կ'առողջացընէ հերաձև ծաւալումն (anévrisme capillaire) երակաց ծաւալում մը, տեսակ տեսակ մարմնոյ կեղտերն, մորթային խլիրդն (cancer de la peau) կոշտած հիւանդութիւնը, պիտակաւոր հիւանդութիւնը (maladie tachetée) և ուրիշ զանազան մորթային հիւանդութիւնք :

Դեռ անցեալ տարիներն էր որ Լոնդրայի բժշկաց մին կնոջ մը երեսի վրայ գոյացած կեղտն անցուց, ուզնաձև ապակիւտ հասցընելով կեղտին վրայ արևու կիզի ճառագայթն : Սոյն դրութեամբ անցուց նաև ուրիշի մը դիմաց վրայ գոյացած վատակար ուռնցքն :

Յիշեալ ամերիկացի բժիշկը կը գրէ՝ որ մինչև այս դարուս վերջերը չէ զանուած այնպիսի կիզողական դեղ մը, որ կարենայ նոյն ազդեցութիւնը ունենալ, ինչ որ ունին արեգական ճառագայթքն :

Դեղատանց մէջ գտնուած որ և իցէ կիզողական դեղերը միշտ կը ջանանք զգուշութեամբ գործածել վասն զի անոնք երբեմն

փոխանակ օգտակար ըլլալու փաստակար կ'ըլլան. ընդհակառակն արեգական կիզողական ազդեցութիւնը եթէ օգտակար ալ չըլլայ վրնասակար ալ չէ, և կրնամք նաև մեր կազմութեան ամենափափուկ հիւտուածոց վրայ ազդել արեգական ճառագայթքը առանց վախնալու որ փաստելնք անտի : Երբ հիւանդին պալարները այրենք և կիզունք ոսպնաձևով մը՝ կեղտնացընելով արևու ջերմութիւնը պալարաց վրայ, այն ատեն հիւանդին կրած ցուր ոչինչ է. և հազիւ թէ հեռացընեմք պալարէն արեգական ջերմութիւնը, իսկոյն ցան ևս կ'անցնի :

Զարմանալի գորութիւն մի կայ արեգական ճառագայթից մէջ, որ դեռ ևս մեզ անծանօթ է :

Թոքերու տկարութիւն ունեցողքը, կուրծքը բաց քանի մը ժամ արեգական առշէ թող կենայ. քիչ օրէն կը տեսնէ արեգական մոգական յատկութիւնները : Սոյն կերպով կարելի է անցունել նաև ներքին վերքերը :

Առանց մանրամասն հիւանդութեանց իջնելու կրնամք ըսել՝ որ արևու ջերմութիւնը՝ չի թողոր որ մազերը թափին, գեղ և դարման է ներքին բորբոքմանց, պալարաց հոսկ ապա մի միայն դեղ է քնահատութեան :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Աջ. — Այն որ մարդուս տեսութեան ամենէն հրաշալի դործարանն է, յոյժ փափուկ է և զիւրաւ կը փաստուի : Շատ պայծառ լոյսը կը հոգնեցնէ և կը տկարացնէ մարդուս աչքերը : Այն ամենայն ինչ որ կը մեղմէ պայծառ լուսոյ ազդեցութիւնը, շատ օգտակար է աչաց պահպանութեան, ինչպէս բաց մթազոյն ակնոցները : Այն ամենայն արհեստաւորք որոնք բռնադատեալ են միշտ առարկայի մը վրայ աչքերնին սեւեռած աշխատել կամ մանրացուցով տեսնել իրենց աշխատանքն, ինչպէս ժամացուցադործք, փո-

րագործք և բնապատումք, ատոնց ամենուն աչքը շատ շուտ կը հոգնի : Այսպիսի անձինք պէտք են խնամք անել իրենց աչաց, ժամանակ ժամանակ վեր վերցընել աչքերնին նայել հեռաւոր մուկ առարկայի մը : Հոգնութիւնը կը տաքցընէ մարդուս աչքերը, դարմանն է պաղ ջուր զարնել աչաց և հոգնութիւն աւտուլ :

Մարդս երբ լուսաւոր առարկաներու ինչպէս ձիան և արևը զարկած ճանապարհներու վրայ երկար ժամանակ նայելու ըլլայ, շատ կը հոգնի իւր աչուները : Գեշերային հըս-

կմանք եւ աշխատութիւնք ֆեստակար են աչաց : Պէտք է մեղմել կանթեղաց լոյսը անթափանցիկ տաքկիներով եւ կամ ուրիշ գիւրին միջոցներով :

Եթէ աչաց մէջ ֆեստակար նիւթ մը մտնէ , ինչպէս կենդանի կիր կամ որեիցէ թը-
ժուտա , իսկոյն պէտք պարզ ջրով եւ կամ քացախախառն ջրով լուալ տալը : Երբ աչաց մէջ օտար մարմին մը կը մտնէ , պէտք է դայն դուրս հանել , եթէ ստորին արտա-
նունքին ներքեւ մտած է , մեղմով կը քա-
շեմք արտաանունքը վար եւ թաց թուղթով կը հանեմք մարմինը դուրս : Իսկ թէ որ մար-
մինը կը գտնուի վերին արտաանունքին ներ-
քեւ , այն ատեն կը ժաշեմք արտաանունքը (ինչպէս երբեմն տղայք խաղալու համար եւ
կամ իրենց հասակակիցները վախճնելու հա-
մար կրնեն) եւ թաշկինակաւ կը հանեմք
մարմինը :

Երբեմն այլ եւ այլ կերպ աչաց քորու-
քում կ'ունենամք , եթէ բորբոքումը արտա-
սալէս է , պէտք է խառնել կէս բաժակ պղղ
ջրոյ մէջ 25 հարիւրագրամ շապ եւ այս ջրով
ամէն առաւօտ լուանալ աչքերը : Եթէ բոր-
բոքումը ներքին է , այն ատեն պէտք է լուամք
քունքերնիս անգլորատակի (belladonna) իւ-
կոթեամբ եւ ըստ կարելոյն մուծ տեղեր
կենամք :

Շատ անգամ աչքերնիս ցլաած ժամանակ
կը գիւմնք տեսակ տեսակ թանձր իւղերու
(քովաստ) , բայց ասոնց վրայ ամենեւին պէտք
չենք վստահիլ եւ ոչ ալ կէս գիտութիւն ու-
նեցող բժիշկներու խօսքերուն ունկնգիր ըլ-
նալ . այլ այսպիսի պարագաներու մէջ , մա-
նաւանդ երբ ժանձր ըլլայ աչացաւ դիմել
քաջ տպարտի մը . վասնզի ինչպէս ըսինք՝
տեսութեան գործարանը մեր կազմութեան
ամենէն փափուկ քործարանն է եւ շատ դիւ-
բաւ կը փճանայ :

Ձայնագիր գործի յօրագրութեան . — Մենք
դիւյ տպարանաց Վեռմանտութիւնը շատ օ-
գուտ կը քաղէ ձայնագիր գործիէն , որ ա-
ռաջ պարզ զուարճալիք մը կը թուէր : Խըմ-
քապիրը ունի տան մէջ մի ձայնագիր գործի .

տոոր առջեւ կը խօսի իւր յօդուածը , խօս-
քերը կը տպաւորուին գործւոյն մոմէ գլանին
վրայ , երբ կը լմնայ խօսքերը , խմբագրիչը
կը հանէ մոմէ գլանը եւ կ'ուղարկէ գրաշա-
րին : Նմանապէս տպարանին մէջ կը գտնուի
ձայնագիր գործի մը . գրաշարը կ'անցընէ՝
խմբագրին մոմէ գլանը իւր գործիքին վրայ ,
ձայնագիրը կամաց կամաց դառնալով կ'ար-
տաբերէ խմբագրին խօսքերը , գրաշարն ալ
գիւրութեամբ կ'սկսի շարել :

Գիւնին քացախի փոխարկելու նոր դրու-
թիւնը . — Քիչ ժամանակուան մէջ գիւնին
քացախի փոխարկելու համար , արդի տարրա-
բանք նոր միջոցներ գտած են , զորս հա-
մառօտիւ կը դնեմք հոռ .

Ա. Եր ձգեմք գինւոյ մէջ պղպեղով խառն
ած եւ թթուած խմոր , իսկոյն կը քացիի գինին :

Բ. Եթէ ալ տաւի շուտ կ'ուղեմք գինին
քացախի փոխարկել , կը ձգեմք գինւոյ մէջ
կղմինտը կամ ժանգոտեալ պողպատ :

Գ. Երկու օրուան մէջ գինին զօրաւոր
քացախի փոխարկելու համար , կը ձգեմք
գինւոյ մէջ զարեհացի եւ հացի պատտաներ :

Դ. Եթէ գինւոյ մէջ գնեմք հացոյ փայտ
(legno frasso) գինին շուտով կը քացիի :

Ե. Ե' տաւումք հաւասար չափով գինե-
մրուր կամ արտա , կոճապղպեղ (zenzero .
տն . գէնճէֆիլ) եւ երկայն պղպեղ . այս ե-
րեք նիւթը մի զանգուածի վերածելով կը
ձգեմք այս ինչ քանակութեամբ բարկ քա-
ցախի մէջ , ուր բաւական ժամանակ կենալէն
վերջը կը հանեմք կը չորցընեմք , եւ երբ
կ'ուղեմք քացախ շինել կը ձգեմք այս
զանգուածը գինւոյ մէջ . երկրորդ օրը կը
զանգուածը գինին ընտիր քացախի փոխարկուած :

Եթէ կը փափագեմք բարկ քացախ ստա-
նալ , կը խառնեմք քացախին հետ սակաւ ինչ
քանակութեամբ եռացեալ քացախ :

1. Կարմրագոյն հողային եւ տղային մրուր՝ զոր
գինին կը թողու հնացած ժամանակ տակաւաց
յատակին եւ կողից վրայ : Թուրքերէն կոչի քու-
րոն :